


**ՀՈԳԱՏԱՐ ԵՂԷՔ ԶԵՐ  
ՀՈԳԻՆԵՐՈՒՆ**

Կ'աղաչեմ, եղբայրներ՝, անյոյս չկորսուիք եւ չմնաք մեր մեռելութեան մէջ, որովհետեւ ամենասքանչելի յարութեան յոյսը ունինք, մանաւանդ ինք իսկ յարութիւն տուողը՝ Յիսուսը: Եւ քանի Յիսուսի բարեկամ մեր հոգին մեղքերով մեռած է, ինչպէս Ղապարոսը (Տե՛ս Ծովհ. 11.17-45) խոստովանութեամբ վԱյն կանչենք եւ Ան կը մօտենայ ողորմութեամբ եւ մարդասիրութեամբ: Անոր առջեւը իյնանք, ինչպէս Ղապարոսին քոյրերը. աղաչենք, արտասուենք եւ ըսենք. Տէր, եթէ հոս ըլլայիր քու օգնութեամբ մեր հոգին չէր մեռնէր, եւ եթէ ըսէ ո՞ր դրիք վայն, ըսենք՝ Տէ՛ր, եկուր եւ տես: Գիտեմ եւ կը հաւատամ, որ ան ստուգիւ կու լայ, որովհետեւ խնամոտ է եւ գթած: Եթէ մարմինը մեռած տեսնելով լացաւ, իսկ երբ հոգին մեռած տեսնէ որքա՛ն աւելի պիտի ցաւի: Չկայ ուրիշ բան մը, որ այնպէս վշտացնէ մեր Տէրը, ինչպէս մեղքերէ մեռած եւ նեխած հոգին, որովհետեւ ան կը կարեկցի մեր բնութեան, եւ իր աստուածութեամբ խնամոտ ու մարդկութեամբ մեզի մօտիկ ըլլալով մեր բոլոր նեղութիւններն ուցաւերը իրը կը համարէ: Եթէ ըսէ վերցուցէք վէմը՝ չարիքներու ծանրութիւնը, թող ոչ ոք հրամանին նկատմամբ ծոյլ գտնուի եւ ըսէ՝ հոտած է այլեւս, որովհետեւ ամենագէտ բնութիւնը ըլլալով Ինք գիտէ ատիկա: Ամէն ինչ Անոր յանձնենք, միայն վէմը վերցնեն խոստովանութեամբ եւ Ան կը ձայնէ դո՛ւրս եկուր, ոչ թէ չորս օրուայ գերեզմանէն, այլ մեղքի դժոխքէն բազմեայ մեր մեռած հոգին: Եւ մենք ներս չմնանք, այլ անմիջապէս դուրս ելլենք եւ ոտքի կապանքներն ու պատանքները քակենք:

**ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
Ս. ՊԱՏԱՐԱԳ**



ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԱՅՏԱՆՈՒՄԸ

**2.- Պատրաստութիւն ընծաներուն**

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱԻԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Դպիրներ կը գովերգեն Սուրբ Երրորդութեան փառքը, իսկ պատարագիչ քահանան մեղմ ձայնով աղօթք կը վերառաքէ առ Բարձեալն Աստուած ըսելով.- «Տէր Աստուած մեր, Դուն որ մեզ քու Միածին Որդիիդ անունով Քրիստոնեայ կոչեցիր, հոգեւոր աւագանին մէջ մկրտեցիր՝ մեր մեղքերու ներումին համար, եւ արժանի ըրիր Միածինդ սուրբ Մարմինով եւ Արիւնով հաղորդուելու:

Այս պահուն կ'աղաչենք, քեզի, Տէ՛ր, մեզ արժանի ըրէ այս սուրբ Խորհուրդը ստանալու, մեր մեղքերու ներումին համար, եւ գիտութեամբ փառաւորելու քեզի, Որդիիդ եւ Սուրբ Հոգիիդ հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտեանից ամէն»...

Շարունակելի



ԲՈՒ ԽՍՔԵՐ ԽՍ ՌՅՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԸ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 26 ՅՈՒՆՈՒԱՐ 2025

ԹԻԻ 4

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԿՏՈՒՄԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**  
Ես. 58.13-59.7: Ա. ՏՄ. 4.12-5.10: Յհ. 3.13-21

**ՅԻՍՈՒՍ ԵՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՏԱՐԱՆԸ**

**ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 3.13-21**

*Ոչ ոք երկինք ելաւ՝ բացի Մարդու որդիէն, որ երկինքէն իջաւ, եւ որ երկինքի մէջ է: Եւ ինչպէս Մովսէս պղինձէ օձը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս այ Մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսպի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսպի անոր հաւատացողը չկորսուի, այլ՝ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց՝ ոչ թէ որպէսպի աշխարհը դատապարտէ, այլ՝ որպէսպի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատալու ն համար:*

*Եւ դատապարտութիւնը այս է.- Լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով որ չար գործ կը կատարէ՝ կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսպի իր գործերը չյայտնուին: Սակայն ով, որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է՝ լոյսին կու գայ, որպէսպի յայտնի ըլլայ, թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են:*

**ՍԱՂՄՈՍ 7**

Տէ՛Ր, Աստուածս, յոյսս քու վրադ դրած եմ. փրկէ եւ ազատէ՛ զիս բոլոր հալածիչներէ: Չըլլայ, որ առիծի պէս իմ անձս գիշատեն, բզկտեն զիս եւ ազատող մը չունենամ:

Տէ՛Ր, Աստուածս, եթէ յանցանք մը գործեցի, կամ ձեռքերուս մէջ անիրաւութիւն կայ, եթէ ինձի բարիք ընողին չարիք հասցուցի, կամ դրկեցի առանց պատճառի ինձի թշնամացողը, թող թշնամին վրաս յարձակի եւ հալածէ իմ անձս, թող զգեսնէ ու խորտակէ իմ կեանքս, եւ իմ փառքս փոշիի վերածէ:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### ԱՅՍԿԱՆ ԶԱՅՐԱՊԵՏ

Հռչականունն ախոյեան հաւատոյ Ս. Երրորդութեան՝ ընդդէմ Արիոսի, որ ուրացած էր Քրիստոսի աստուածութիւնը: Քրիստոնէայ բարեպաշտ ընտանիքի զաւակ, ծնաւ 295-ին Աղէքսանդրիոյ մէջ: Նոյն քաղաքին Աղէքսանդրոս հայրապետը, օր մը տեսնելով, որ անկաղ ղեռ մատաղ մանուկ, ծովեզերքը եպիսկոպոսի կերպ առած, մկրտութիւն եւ ձեռնադրութիւն կատարել կը ձեռնարկէ, հոգեւոր կոչումի նշան նկատեց իր այդ ընթացքը եւ զայն ընդունեց հայրապետանոցի մէջ, ուր զարգացաւ շնորհալի փոքրիկը: Յետոյ սարկաւագ ձեռնադրուեցաւ անկէ եւ կարճ ժամանակի մէջ փայլեցաւ իր տաղանդով, աստուածաբանական խոր հմտութեամբ ու գրչի եւ խօսքի ձիրքերովը առարկայ դառնալով ամէնուն ուշադրութեան: Սարկաւագ էր տակաւին, երբ ընկերակցելով իր Եպիսկոպոսին, Նիկիոյ Ժողովին մէջ պաշտպանեց ուղղափառ հաւատքը: Աղէքսանդրի յաջորդելէ ետք, իբրեւ պատրիարք Աղէքսանդրիոյ, իշխանութեամբ եւ աւելի ոգեւորուած ջանքով պայքարեցաւ աղանդամիտ հոսանքներու, մասնատրապէս Արիանոսներու եւ Կիսարիանոսներու դէմ եւ այդ պատճառաւ քանիցս ենթարկուեցաւ բուռն հակառակութեան, երբեմն ստիպուելով նոյնիսկ հեռանալ իր Աթոռէն: Մեռաւ 373-ին: Իր հզօր վարդապետութիւնը եւ անհամեմատ կորովը արժանի դարձուցին զինքը նկատուելու Եկեղեցւոյ ամենամեծ վարդապետներէն մին:

Իրաւամբ է, որ Ս. Գրիգոր Նազիանզացի կոչած է զայն «Միւն Եկեղեցւոյ»: Իր գրական երկերը, ամէնքն ալ աստուածաբանական եւ ջատագովական, որոնցմէ կարեւոր մաս մը Ե. դարուն եւ յետոյ թարգմանուած են հայերէնի, եկեղեցական մատենագրութեան ամենէն թանկագին հարստութիւններէն կը համարուին իրաւամբ:

### ԿԻՐԵՂ ԶԱՅՐԱՊԵՏ

Եգիպտացի ազնուական եւ բարեպաշտ ընտանիքէ, ազգական Թէոփիլոս պատրիարքին, որմէ ձեռնադրուեցաւ եւ 412-ին անոր յաջորդեց իբրեւ պատրիարք Աղէքսանդրիոյ: Վարդապետ Եկեղեցւոյ եւ կորովի պաշտպան ուղղափառ հաւատքին: Ինքն էր, որ նախագահեց Եփեսոսի տիեզերական ժողովին, ջախջախեց Նեստորի հերետիկոսութիւնը եւ «միաւորեալ մի բնութիւն» բանաձեւովը, որ հիմն է Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեան, իր վերջին ճշդումին յանգեցուց քրիստոսաբանութիւնը: Այնքան եռանդուն հոգով ջանաց ջնջել հեթանոսութեան հետքերը Աղէքսանդրիոյ մէջ, որ յանիրաւի զրպարտուեցաւ իբրեւ պատճառ սպանութեան Հիւպատիա իմաստասէր տիկնոջ: Հեղինակ է մեկնաբանական եւ աստուածաբանական բազմաթիւ գիրքերու, որոնցմէ շատերը հայերէնի թարգմանուած են մասամբ Ե. եւ մասամբ Ը. դարերուն Միւնեաց Դպրոցի պատկանող մատենագիրներու միջոցաւ: Կիրեղ հայրապետ մեռաւ 444 թուականին:

Հայ Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն այս տարի Աթանաս եւ Կիրեղ հայրապետներու տօնը կը զուգադիպի Շաբաթ՝ 25 Յունուարին:

## ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

### ԿԸ ՅԱՂԹԵՆՔ՝ ԵՐԲ ՔՐԻՍՏՈՍ ՄԵՋ ԿՆԱՎՋՆՈՐԳԷ

Կարեւոր չէ թէ ո՞ր կ'առաջնորդէ մեզ Յիսուս, լե՞ռ, թէ՛ ձոր, անապատ, թէ՛ անտառ, մարդաբնակ վայրե՞ր, թէ՛ դիւրբնակ վայրեր: Կարեւորը այն է՝ որ Ինք ըլլայ մեր առաջնորդը: Աստուած Իսրայէլի ժողովուրդը դէպի փոթորկալից Կարմիր ծովը առաջնորդեց, բայց ան ծովը ցամքեցուց անոնց ոտքերուն առջեւ: Ան գիրենք չառաջնորդեց դէպի կանաչորակ մարգագետինները, այլ՝ դէպի անջրդի անապատը Սինայի, եւ սակայն այդ անջրդի վայրին մէջ էր, որ Աստուած անջուր ժայռերէն ջուր բխեցուց, այդ անհաց անապատին մէջ էր, որ Աստուած գիրենք կերակրեց երկնային մանանայով:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ՊԱՍԸ

Երբ Աստուած ինքն է մեզ առաջնորդողը կեանքի փշալից ճամբաներէն՝ վստահ եղէք, որ այդ փուշերը կոխկրտելով պիտի քալենք երթանք: Երբ Տէրը ինքն է մեզ առաջնորդողը խաւար ձորերէն՝ վստահի՛նք իրեն, եւ ան խաւար ձորերը Թաբոր լեռի պիտի վերածէ, ուր Աստուծոյ փառքը պիտի ճառագայթէ մեր դէմքերուն վրայ:

Աշխատինք, որ ամէնօրեայ մեր աղօթքներով Մեր Տէր Յիսուս Քրիստոսը ունենանք մեր կեանքին մէջ:

## ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՋԵՆ...

### ԵԹԷ ՔՈՒ ԳԱՏԻՂ ԵՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՏՈՒԾՈՅ ԳԱՏԱՏԱՆՆԻՆ ԿԸ ԿԱՏԱՀԻՍ, ԿԱՐԳԱ՛, ՍԱՂՄՈՍ 79

Ո՛վ Աստուած, հեթանոս ազգեր տիրապետութեանդ սահմանները մտան, բու սուրբ տաճարդ պղծեցին, Երուսաղեմը աւերակի վերածեցին: Քեզի ծառայողներուն դիակները կեր դարձուցին գիշակեր թռչուններուն, թեզի հաւատարիմ մարդոց մարմինները կեր դարձուցին վայրի գաւաններուն: Երուսաղեմի չորս կողմը ջուրի պէս հոսեցուցին անոնց արիւնը, եւ չկար մէկը որ թաղէր վանոնք: Մեր դրացին ժողովորդներուն նախատինքի առարկան դարձանք, ծաղր ու ծանակը՝ մեր շուրջ գտնուողներուն: Տէ՛ր, մինչեւ ե՞րբ բարկացած պիտի մնաս, կրակի պէս միշտ բորբոքած պիտի մնայ նախանձախնդրութիւնդ: Քեզ չճանչցող ազգերուն վրայ թափէ վայրոյթդ, այն թագաւորութիւններուն՝ ուր թեզ չեն պաշտեր: Որովհետեւ անոնք լափեցին բու ժողովորդդ, աւերակի վերածեցին մեր երկիրը: Մի յիշեր մեր անցեալի յանցանքները, փութով եկուր՝ ողորմէ՛ մեզի, որովհետեւ յետին թշուառութեան հասանք: Օգնէ մեզի, ո՛վ մեր փրկիչ Աստուածը բու անունդ փառաւորելու համար, ապատէ՛ մեզ եւ բաւէ՛ մեր մեղքերը, անունդ բարձր պահելու համար:

### ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԷՆ